Project funded by EUROPEAN UNION

PRO EXTOUR

Black Sea CROSS BORDER COOPERATION

**PRO EXTOUR. «Սևծովյան ավազանում ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության խթանում» նախագիծ**

**Ազգային կոնֆերանս-քննարկում**

Սիրով հրավիրում ենք ներկա գտնվելու PRO EXTOUR նախագծի շրջանակներում կազմակերպվող կոնֆերանս-քննարկման, որը տեղի կունենա **2021 թ. հունիսի 11-ին, ժամը 10.00,** ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում՝ 419 լսարան:

Սեմինարի ընթացքում կներկայացվեն ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգայնացման և հանրայնացման մակարդակի բարձրացման, ինչպես նաև ՀՀ-ի համար միջազգային զբոսաշրջային մշակութահենք իմիջի ստեղծման ուղիները մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության անհրաժեշտության, տեսլականի և նպատակների գործողության ծրագիրը: Նիստի ընթացքում կքննարկվեն նաև շահառուների կարծիքները, ընկալումները և առաջարկությունները Սևծովյան ավազանի երկրներում փորձառական զբոսաշրջության առաջնայնացման վերաբերյալ:

Քննարկմանը մասնակիցների թվում ակնկալվում են տուրօպերատորներ, տուրիստական գործակալությունների ներկայացուցիչներ, զբոսավարներ, մշակութային/ժառանգության օբյեկտների ղեկավարներ, փառատոներ կազմակերպիչներ, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

**Օրակարգ.**

10.00-10.30 Գրանցում

10.30-10.45 Ծրագրի և դրա նպատակների ներկայացում

10.45-11.00 Կարիքների գնահատման զեկույցի ներկայացում/քննարկում

11.00-11.30 Տարածաշրջանային գործողության ծրագրի քննարկում

11.30-12.30 Խմբային աշխատանքներ

12.30-13.00 Սուրճի ընդմիջում

13.00-14.15 Խմբային աշխատանքերի քննարկում

14.15 – 15.15 Հարց ու պատասխան

15.15 – 15.30 Սուրճի ընդմիջում

15.30-16.30 Վերջնական քննարկումներ

**Ծրագրի հակիրճ նկարագրություն:** PRO EXTOUR- ը նախագիծ է, որի նպատակն է խթանել փորձառական տուրիզմը՝ որպես կայուն զարգացման ուղի Սևծովյան ավազանի երկրներում զբոսաշրջության բիզնեսի համար՝ արժևորելով բնիկ ժառանգության և մշակույթի ներուժը, նորարարական լուծումներ և միջսահմանային համագործակցություն: Ծրագիրը երեք բարձրագույն ուսումնական հաստատությունների համատեղ նախաձեռնությունն է, որոնք ունեն զբոսաշրջության ոլորտում կիրառական հետազոտական փորձ՝ Վառնայի կառավարման համալսարան (Բուլղարիա), Երևանի պետական համալսարան (Հայաստան) և Սալոնիկի համալսարան (Հունաստան), ինչպես նաև մշակութային ցանցային կազմակերպությունը՝ Վրացական արվեստի և մշակույթի կենտրոնը (Վրաստան) և հյուրընկալության տարածաշրջանային կլաստերը՝ Խոհարարական արվեստի և հյուրընկալության ասոցիացիան (Բուլղարիա):